ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1921-1991 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ստեփանյան Գևորգ Սրապիոնի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վիրաբյան Վանիկ Հրանտի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հովհաննիսյան Էդգար Գագիկի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 20-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունվարի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վիրահայոց թեմն անբաժան մասն է Հայ առաքելական սուրբ եկեղեցու: Վրաստանի սահմաններում ապրող հայությունը դարերի ընթացքում ստեղծած հոգևոր-մշակության ահռելի ժառանգությամբ այսօր էլ շարունակաբար պահպանում է իր ազգային ինքնուրույն նկարագիրն ու դիմագիծը: Դրանում իր մեծ դերակատարությունն ունի Վիրահայոց թեմը, որի գործունեությունը սերտորեն աղերսվում է վիրահայության պատմության հետ:

Վիրահայոց թեմը Հայաստանի Հանրապետությունից դուրս գործող ամենահին թեմն է, որը գոյություն ունի տակավին XII դ. 70-ական թվականներից[1]: Վրաստանը՝ որպես քրիստոնյա երկիր, դարեր շարունակ հարազատ հայրենիք է եղել նաև հայերի համար: Ընդսմին, վրաց եկեղեցու հետ դարեր շարունակ կողք կողքի գոյատևելով՝ Վիրահայոց թեմը յուրահատուկ կամուրջ է եղել Ս. Էջմիածնի և վրաց պատրիարքարանի միջև:

Վիրահայոց թեմը ղեկավարվում է հայ եկեղեցու կանոններով՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ: Թեմի առաջնորդը նշանակվում է Վեհափառ հայրապետի կողմից: Թեմն ընդգրկում է Թբիլիսիի, Ջավախքի, Աջարիայի, Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում գտնվող հայկական համայնքները: Մինչև 1930-ական թթ. կեսերը առաջնորդանիստ էր համարվում Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցին կամ, ինչպես միջնադարում է անվանվել, Հարանց վանքը:

Վիրահայոց թեմը համախմբում և գլխավորում է Վրաստանի տարածքում գործող եկեղեցիները, առաջնորդում հայ համայնքը, գլխավորում է Վրաստանի հայ բնակչության հոգևոր կյանքը, նպաստում տեղի հայ համայնքի կենտրոնացմանը Հայ առաքելական սուրբ եկեղեցու շուրջ: Կազմակերպում է հայապահպանությանը և ազգապահպանությանը միտված կրթական, մշակութային, երիտասարդական միջոցառումներ, հավուր պատշաճի նշում Հայ առաքելական սուրբ եկեղեցու բոլոր տոներն ու հիշատակության օրերը, պահպանում ավանդույթներն ու ծիսակատարությունները: Առաջնորդարանը գլխավորում է Վրաստանի ողջ տարածքում թեմապատկան եկեղեցիների, վանքերի ու մատուռների գործունեությունը, ինչպես նաև կառավարում է թեմի հովանու ներքո գործող հոգևոր, գիտական, կրթական, մշակութային, սպորտային, մանկական ու երիտասարդական զանազան կենտրոններ ու խմբակներ: Թեմի առաջնորդարանը սերտորեն համագործակցում է Վրաստանում Կրոնական հարցերի պետական գործակալության, Վրաց ուղղափառ եկեղեցու, Վրաստանում ՀՀ դեսպանության, Հայաստանի Հանրապետության սփյուռքի, մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության հարցերով պատկան կառույցների, Վրաստանում և նրա սահմաներից դուրս գործող կրոնական, հասարակական ու մշակութային կազմակերպությունների, հայրենակցական տարբեր միությունների հետ:

Վրաստանում դարերի ընթացքում կառուցված մոտ 400-ից ավելի հայկական եկեղեցիներից ներկայումս կանգուն և կիսավեր են շուրջ 320-ը:

Հայաստանի խորհրդայնացումը նոր փորձությունների ու դժվարությունների առաջ կանգնեցրեց Հայ առաքելական եկեղեցուն: Հայտնի է, որ 1920-ական թվականների սկիզբը ԽՍՀՄ-ում նշանավորվեց հակաեկեղեցական քաղաքականության բուռն ընթացքով: Ստեղծված հակակրոնական կառույցներն սկսեցին մի քանի ուղղությամբ

[1] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, էջ 97:

պայքար մղել կրոնի և եկեղեցու դեմ: Կոմունիստական գաղափարախոսության մենատիրության տարիներին տարվող հակաեկեղեցական քաղաքականության հետևանքով ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ խորհրդային մյուս հանրապետություններում գործող թեմերը հայտնվել էին ծանր կացության առջև: Փակվել կամ ավերվել են վաղ միջնադարից գործող եկեղեցիները: Այդ քաղաքականության հետևանքով փակվել են նաև Վիրահայոց թեմի տարածքում գործող գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը: Թբիլիսիում քանդվել են Վանքի մայր եկեղեցին, Կուկիայի Ս. Աստվածածին, Հավլաբարի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Խարփուխի Ս. Սարգիս, Ս. Հրեշտակապետաց, Մետեխի Ս. Վարդան, Ջգրաշենի Ավետյաց Ս. Աստվածածին, Նավթլուղի Ս. Գևորգ, Խոջիվանքի և այլ եկեղեցիներ: Ըստ այսմ՝ սույն թեմայի հետազոտությունն իր արդիականությամբ նաև հնարավորություն է ընձեռում համակողմանի պատկերացում կազմել Վիրահայոց թեմում խնդրո առարկա ժամանակաշրջանում ընթացած գործընթացների մասին:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև Վիրահայոց թեմի առջև ծառացած արդի խնդիրներով: Վիրահայոց թեմն այսօր չունի իրավաբանական անձի պատշաճ կարգավիճակ: Վրաստանում գոյություն չունի որևէ օրենսդրական ակտ, որով կկարգավորվեին կրոնական կազմակերպություններին վերաբերող իրավունքներն ու պարտականությունները: Մինչդեռ հնօրյա Վիրահայոց թեմին անհրաժեշտ է վերադարձնել Վրաստանում հայկական պատմական եկեղեցիները: Իրականացնել միջազգային օրենսդրությամբ և Վրաստանի սահմանադրությամբ պահանջվող խնամք և հոգածություն պատմամշակութային կոթողների նկատմամբ: Ելնելով այս մոտեցումներից՝ Վիրահայոց թեմի 1921-1991 թթ. պատմության ուսումնասիրությամբ ոչ միայն արդիական, այլև գործնական է դառնում մեր առջև ծառացած օրակարգային հարցերը՝ թեմական և ծխական կյանքի կազմակերպման օրենսդրական ուղենիշների մշակման և խնդիրների լուծման առումով: Ընդսմին, ատենախոսության մեջ քննարկված հիմնահարցերն օգտակար նյութ կարող են ծառայել «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի համար:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է մանրամասն ուսումնասիրել և ներկայացնել Վիրահայոց թեմի գործունեությունը խորհրդային իշխանության տարիներին՝ 1921-1991 թթ.:

Ատենախոսության խնդրո առարկա թեմայի շրջանակում փորձ է արվում համապարփակ քննությամբ պարզաբանել և լուծում տալ հետևյալ նպատակային խնդիրներին.

- Ամբողջացնել Վիրահայոց թեմի գործունեության 1921-1991 թթ. ընդգրկող ժամանակահատվածի նկարագիրը,
- համառոտ ներկայացնել Վիրահայոց թեմը նախախորհրդային շրջանում,
- վերհանել այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց բախվեց թեմը կոմունիստական մենիշխանության հաստատման, մասնավորապես՝ ստալինյան քաղաքական բռնաճնշումների շրջանում,
- քննության առնել Վիրահայոց թեմի գործունեությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում,
- վերհանել և վերլուծել Վիրահայոց թեմի առաջնորդների գործունեությունը,
- կարևորել թեմի եկեղեցիների վերաբացման և վերանորոգման աշխատանքները:
- Վրաստանի տարածքում առկա հայկական կրոնական և մշակութային ժառանգության գնահատումը, դրանց պատշաճ ներկայացումը,

➢ կարևորել հայկական մշակութային ժառանգության պահպանությունը: Վիրահայոց թեմը ձգտում է վերադարձնել խորհրդային իշխանության տարիներին բռնագրավված Թբիլիսիի Նորաշեն Ս. Աստվածածին, Ս. Նշան, Մողնու Ս. Գևորգ, Ս. Մինաս, Շամքորեցոց Ս. Աստվածածին (Կարմիր Ավետարան) եկեղեցիները, Ախալցխայի Ս. Վարդանանց եկեղեցին և այլ կրոնական հաստատություններ: Վրաստանի տարածքում հայկական պատմամշակութային ժառանգության հաշվառումը, որը պետք է ընդգրկի ոչ միայն սփռված վանքերը, եկեղեցիները, ուխտատեղիներն ու մատուռները, այլև գերեզմանոցները, խաչքարերն ու տապանաքարերը:

Ատենախոսության Ժամանակագրական ընդգրկումը: Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից՝ 1921 թ.-ից մինչև 1991 թ.: Հաշվի առնելով խնդրո հիմնահարցի կարևորությունը՝ համառոտ ակնարկով ներկայացվել է նաև թեմի գործունեությունը նախքան Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումը:

Ատենախոսության կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, յոթ ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսության թեմային բնորոշ ուսումնասիրությունը կատարվել է արխիվային վավերագրերի, գրականության և մամուլի հաղորդած տեղեկությունների համադրման ու գիտական վերլուծության մեթոդով: Պատմաքննական մեթոդի միջոցով աղբյուրների վերլուծությունը թույլ է տվել ներկայացնել խնդրո առարկան, թեմայի ժամանակագրական շրջանակներում, թեմի ամբողջական գործունեությունը: Համակողմանիորեն քննվել են թեմական առաջնորդներից յուրաքանչյուրի քայլերը թեմի կառավարման խնդիրների լուծման ուղղությամբ:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության նյութերի հիման վրա հրատարակվել է 1 մենագրություն և 8 գիտական հոդված: Թեմայի շրջանակներում զեկուցումներ են կարդացվել միջազգային և հանրապետական գիտաժողովներում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության» բաժնի կողմից:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտական նորույթը. առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով փաստագրական, պատմագիտական գրականությունը, տարբեր նորահայտ վավերագրեր, ամբողջական տեսքով ներկայացվում է Վիրահայոց թեմի 1921-1991 թթ. պատմությունը: Ուսումնասիրվել է առանձին թեմական առաջնորդների (Գևորգ արք. Չորեքչյան, Արտակ եպս. Սմբատյան, Գևորգ եպս. Սերայդարյան) գործունեությունը: Սույն ուսումնասիրությունն ունի գործնական նշանակություն, որ կարող է նպաստել Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմության ամբողջական ուսումնասիրման համար:

Աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության հիմնական աղբյուրագիտական հիմքը կազմում են Հայաստանի Ազգային Արխիվում (այսուհետ՝ ՀԱԱ) պահպանվող Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի, Ս. Էջմիածնի Լուսավորչական Սինոդի, Կաթողիկոսական դիվանի, ինչպես նաև եկեղեցական այլ ֆոնդերի արխիվային փաստաթղթերը:

Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի ֆոնդը (№ 53), Հայաստանի Ազգային արխիվի խոշոր հավաքածուներից է: Այն կարևոր նյութեր է պարունակում թեմի մինչև 1923 թ. գործունեության մասին:

Աղբյուրագիտական հիմնական նյութերից են նաև Վրաստանի Հայոց թեմական խորհրդի (ֆ. 148, ց. 1 գգ. 13, 22, 24) վավերագրերը, որն ընդգրկում է 1897-1951 թթ.: Նշված ֆոնդերում ընդգրկված վավերագրերն ամբողջական պատկերացում են տալիս թեմական խորհրդի գործունեության մասին: Այդ վավերագրերում տեղեկություններ կան դրամական մուտքի, ելքի մասին, անդորրագրերի մատյանների, ստացականների, հաշվեթղթերի, թեմական առաջնորդների վարձատրության, քահանաների, ծխականների գործունեության մասին, հայտարարություններ, գրություններ և այլն:

Վերոնշյալ ֆոնդերում տեղ են գտել նաև թեմի առաջնորդ Գևորգ արք. Չորեքչյանի զեկուցագրերը՝ թեմական խորհրդի և նրա անդամների տնտեսական ծանր դրության, ինչպես նաև խորհրդի և ծխականների ընդհանուր եկեղեցական ժողովների արձանագրությունները: Շատ կարևոր են նաև վանքերի, եկեղեցիների, ուխտատեղիների փակման, վերաբացման, կողոպտման և գույքի մասին վավերագրերը: Առանձին վավերագրեր կան նաև Թիֆլիսի հայկական գերեզմանոցներից մի շարք շիրմաքարերի տեղահանման մասին:

Կարևոր են նաև Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի (1924-1955 թթ.) ֆոնդում (№ 409) պահվող վավերագրերը: Ֆոնդում առկա են Վիրահայոց թեմի առաջնորդների և բարձրաստիճան այլ հոգևորականների զեկուցագրերն ու հայտարարությունները՝ թեմի ազգային-եկեղեցական գործերի մասին: Գերագույն Հոգևոր խորհրդի և թեմի միջև եղած գրագրությունները պատկերացում են տալիս թեմի շրջանակում գործող եկեղեցիների նյութական, տնտեսական կարողությունների, հավատացյալների և եկեղեցու նկատմամբ տեղական իշխանությունների վերաբերմունքի մասին:

ՀԱԱ-ի կարևորագույն ֆոնդերից է նաև Ախալցխայի Հայոց լուսավորչական հոգևոր կառավարության ֆոնդը (N 355), որտեղ բազմաթիվ տեղեկություններ կան ջավախահայերի հոգևոր կյանքից:

Թեմայի ուսումնասիրման համար կարևոր են նաև ՀԱԱ-ում պահվող (ֆ. 1063, ց. 1, գ. 1636), 1958 թ. կազմված Վրացական ՍՍՀ-ում գտնվող հայկական պատմա-ճարտարապետական և հնագիտական հուշարձանների անձնագրերը (վկայագրեր):

Հետազոտության համար կարևորություն են ներկայացնում արխիվային վավերագրերի ժողովածուները, որոնցում հարուստ նյութեր կան Վիրահայոց թեմի թեմական առաջնորդների, վարչական կառուցվածքի, հոգևորականների, ծխական համայնքների և եկեղեցիների մասին[2]:

---

[2] Տե՛ս Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. կաթողիկոսի կյանքը և գործունեությունը, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ., 1955; Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.**, Երևան, «Երևանի համալսարանի տպարան», 1994; Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Բ, կազմեց՝ **Բեհբուդյան Ս.**, Երևան, Հայաստանի Ազգային արխիվի հրատ., 1996; Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1914-1920), հատոր Բ. (1917-1920), կազմող՝ **Ավագյան Գ.**, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ., 2018; **Արտակ Եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի)** հոգևոր, գրական, պատմա-բանասիրական գործունեությունը և գնդակահարությունը, 1876-1937 թթ.,

Հիմնահարցի ուսումնասիրության առումով չափազանց կարևոր նշանակություն են ունեցել թեմայի առնչությամբ հրատարակված պատմագիտական աշխատությունները:

Ընդգրկված հարցերի բազմազանության առումով առանձնանում են պ.գ.դ. Ստեփան Ստեփանյանցի աշխատությունները[3]: Հեղինակը արխիվային և այլ սկզբնաղբյուրներով, փաստական հարուստ տեղեկությունների հիման վրա լուսաբանում է այն դժվարին ժամանակաշրջանը, որում հայտնվել էր հայ եկեղեցին խորհրդային իշխանության հաստատման տարիներին, եկեղեցու նկատմամբ տարվող անհանդուրժողական քաղաքականությունը: Հեղինակի կողմից շրջանառության մեջ դրված բազմաթիվ վավերագրերի թվում ներառված են նաև Վիրահայոց թեմին վերաբերող նյութեր: Դրանցում տեղեկություններ կան ստալինյան քաղաքական բռնաճնշումների շրջանում Վիրահայոց թեմում բռնությունների ենթարկված հայ հոգևորականների մասին: Այս առումով, բռնադատված հոգևորականների մասին արժեքավոր է նաև պ.գ.դ. Արմենակ Մանուկյանի աշխատությունը[4]: Հեղինակը տարաբնույթ արխիվային նյութերի հիման վրա մանրամասն ներկայացնում է հայ հոգևորականների դեմ հարուցված դատական գործերը՝ 1930-1938 թթ.:

Հիմնահարցի գիտական ուսումնասիրության համար փաստական մեծ արժեք ունեն Վիրահայոց թեմի մշակութային ժառանգության (եկեղեցիներ, վանքեր, խաչքարեր, տապանաքարեր) պահպանման հիմնարցերին նվիրված հուշարձանագետ Սամվել Կարապետյանի աշխատությունները[5]:

Թիֆլիսի հայոց եկեղեցիների ուսումնասիրության բնագավառում շնորհակալ աշխատանք է կատարել պ.գ.դ. Պարույր Մուրադյանը: Հեղինակը հին Թիֆլիսի մասին վկայություն բովանդակող հիշատակարանների, ուղեգրությունների, և այլ նյութերի քննությամբ ճշգրտել ու սահմանել է Թիֆլիսում հայոց եկեղեցիների կառուցման ժամանակագրությունն ու տեղորոշումը: Ընդսմին, հեղինակը ներկայացրել է Թբիլիսիում պահպանված կանգուն և կիսավեր եկեղեցիների գործունեության պատմությունը[6]:

Ատենախոսության շարադրման համար կարևորություն է ունեցել պ.գ.թ. Արուսյակ Տերչանյանի աշխատությունը, որտեղ հեղինակը արխիվային հարուստ փաստական նյութի հիման վրա լուսաբանել է Երկրորդ աշխարհամարտի տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը, բացահայտել հաղթանակում նրա

կազմեց՝ **Բեհբուդյան Ս.**, Երևան, 1997: **Վիրաբյան Ա., Ավագյան Գ.**, Գեւորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը Վիրահայոց թեմի առաջնորդ (փաստաթղթեր), «Էջմիածին», 2009, ԺԱ, էջ 102-121.

[3] Տե՛ս **Ստեփանյանց Ս. (Կերտող),** Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994; Գիրք տառապելոց. 1920-1950-ական թվականների բռնությունների զոհ հայ հոգևորականներ, Երևան, 2002:

[4] Տե՛ս **Մանուկյան Ա.**, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Երևան, 1997:

[5] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները (1988-1998), գիրք II, Երևան, 1998; Թբիլիսիի Ս. Նշան Ս. Նիկողայոսի եկեղեցի, Երևան, 2012:

[6] Տե՛ս **Մուրադյան Պ.**, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, ուսումնասիրություն և աղբյուրներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2009, Թիֆլիսի Հայոց Նորաշեն եկեղեցու իրական պատմությունը, «Էջմիածին», 2008, մայիս, էջ 92-97:

ունեցած ավանդը, վեր է հանել պատերազմական պայմաններում պետություն–եկեղեցի հարաբերությունների հաստատումը և այլ կարևոր հարցեր[7]:

Քննարկվող ժամանակաշրջանի հայ-վրացական փոխհարաբերությունների, դրանցում առկա հիմնախնդիրների լուծման առնչությամբ առանձնակի արժեք և կարևորություն են ներկայացնում ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի[8], պ.գ.դ. Վանիկ Վիրաբյանի[9], պ.գ.թ. Բենիամին Մաիլյանի[10] աշխատությունները:

Թեմայի հետազոտության առումով կարևորել ենք նաև պ.գ.թ. Վարդիթեր Գրիգորյանի ուսումնասիրությունը[11]: Հեղինակը տարաբնույթ վավերագրերի հիման վրա լուսաբանել է XIX դարի 30-ական թ.- XX դ. առաջին տասնամյակում Վիրահայոց թեմի եկեղեցական-վարչական, իրավական և տնտեսական հիմնահարցերը:

Վիրահայոց թեմի վաղ շրջանի գործունեության ուսումնասիրության առումով կարևոր նպաստ է բերել պ.գ.թ. Լիլիթ Մելիքյանի ուսումնասիրությունը[12]:

Ատենախոսությունը շարադրելու համար կարևոր են եղել նաև թեմայի առնչության հրատարակված հոդվածները: Այս առումով կարևորվում են Հենրիկ Խառատյանի[13], ՀՀ ԳԱ Թղթակից անդամ Մորուս Հասրաթյանի[14], պ.գ.թ. Թամարա Վարդանյանի[15], պ.գ.թ. Վահե Սարգսյանի[16], պ.գ.թ. Ավագ Հարությունյանի[17] հրապարակումները: Դրանցում քննության են առնված Թիֆլիսում հայերի

---

[7] Տե՛ս **Տերչանյան Ա.** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.), Երևան, 2010:

[8] Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

[9] Տե՛ս **Վիրաբյան Վ.,** Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2016:

[10] Տե՛ս **Մաիլյան Բ.,** Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում (1918-1921 թթ.), Երևան, 2016:

[11] Տե՛ս **Գրիգորյան Վ.,** Հայ Առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչակառավարման համակարգը XIX դարի 30-ական թ.- XX դ. առաջին տասնամյակում, Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2021:

[12] Տե՛ս **Մելիքյան Լ.**, Հայկական թեմը և հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դարերում, Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2023:

[13] Տե՛ս **Խառատյան Հ.**, Թբիլիսիի Ս. Ստեփաննոս կուսանաց անապատի և մայրապետ իշխանուհի Հռիփսիմե Թահիրյանցի մասին, «Էջմիածին», 2007, մայիս, էջ 87-91:

[14] Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Թբիլիսիի Հայկական եկեղեցիների ճարտարապետությունը, «Էջմիածին», 2009, հունիս, էջ 67-75:

[15] Տե՛ս **Վարդանյան Թ.**, Վրացացման գործընթացները Վրաստանում, «Գլոբուս էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», Երևան, 2009, № 6, էջ 50; Թիֆլիսի և մերձակա բնակավայրերի հայությունը 5-21-րդ դդ. (համառոտ ակնարկ), «Գլոբուս Ազգային անվտանգություն», Երևան, 2011, № 8-9 (53-54), էջ 5-108:

[16] Տե՛ս **Սարգսյան Վ.**, Վրաց Ուղղափառ եկեղեցու և Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի իրավական կարգավիճակի օրենսդրական կարգավորումը հետխորհրդային Վրաստանում, «Պատմաբանասիրական հանդես», 2021, № 2, էջ 134-147:

[17] Տե՛ս **Հարությունյան Ա.**, Խորհրդային իշխանության հակակրոնական պայքարը 1920-1930-ական թվականներին. քաղաքագիտական վերլուծություն, «Էջմիածին», 2022, Զ, էջ 96-114; «Ազատ եկեղեցական» աղանդի հակականոնական գաղափարախոսությունը 1920-ական թվականներին. քաղաքագիտական վերլուծություն, «Էջմիածին», 2023, Է, էջ 87-103:

շինարարական-ճարտարապետական, մասնավորապես՝ եկեղեցաշեն գործունեության, Վարստանում տարվող ազգային քաղաքականության, ինչպես նաև եկեղեցիների իրավական կարգավիճակի և օրենսդրական կարգավորման մասին հարցերը:

Ուսումնասիրությունն իրականացնելու համար չափազանց մեծ նշանակություն ունի նաև ժամանակի պարբերական մամուլը: Հատկապես կարևոր է «Էջմիածին» պաշտոնական ամսագիրը, որտեղ տարբեր տարիներին հրատարակված հոդվածներում տեղեկություններ կան նաև Վիրահայոց թեմի եկեղեցական կյանքի տարաբնույթ հարցերի մասին:

Վիրահայոց թեմի գործունեության լուսաբանման կարևոր առանձնակի նշանակություն են ունեցել Վրաստանում ժամանակի պաշտոնական մամուլում հրատարակված նյութերը[18]:

Այսպիսով, թեմային առնչվող աշխատությունների, տպագիր սկզբնաղբյուրների, նորահայտ արխիվային նյութերի և մամուլի հիման վրա ներկայացրել ենք Վիրահայոց թեմի 1921-1991 թթ. պատմությունը:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ ենթագլուխներից, եզրակացությունից, գրականության և օգտագործված աղբյուրների ցանկից ու հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, նպատակն ու խնդիրները, մեթոդական հենքը, ուսումնասիրվածության աստիճանը, օգտագործված գրականությունն ու աղբյուրները:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Վիրահայոց թեմը խորհրդային իշխանության առաջին տարիներին (1921-1938 թթ.)»՝** բաղկացած չորս ենթագլխից:

Ա. **«Վիրահայոց թեմը նախախորհրդային շրջանում (համառոտ ակնարկ)»** ենթագլուխում համառոտ տրված է Վրաստանում Հայ առաքելական եկեղեցու գործունեության ակունքների թեմի սկզբնավորման պատմությունը: Վիրահայոց թեմը գոյություն ունի տակավին XII դ. 70-ական թվականներից: Մինչև 1253 թ. ներկայիս Ս. Գևորգ կամ Բերդի մեծ եկեղեցու հիմնադրումը, որպես առաջնորդանիստ ծառայել է Տփղիս (Թիֆլիս, 1936 թվականից՝ Թբիլիսի) քաղաքի Բերդի փոքր կամ Քառասնից եկեղեցին[19]: Թեմի առաջնորդներից մատենագրության մեջ տեղեկություններ են պահպանվել Բարսեղ եպիսկոպոսի մասին, որը 1179 թ. մասնակցել է Հռոմկլայում հրավիրված եկեղեցական ժողովին:

Վիրահայոց թեմի առաջնորդներից շատերը եղել են ականավոր հոգևորականներ, մտավորականներ, հասարակական, քաղաքական գործիչներ, ովքեր ազգանվեր աշխատանք են կատարել ոչ միայն Վրաստանի, այլև համայն հայության կյանքում: Ինչպես, օրինակ, Սարգիս Դ Վրաստանցին, Հովհաննես Ը Կարբեցին, Ներսես Ե Աշտարակեցին, Մակար Ա Թեղուտցին, Գևորգ Ե Սուրենյանցը, Գևորգ Զ Չորեքչյանը հետագայում օծվել են Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Գարեգին Ա Հովսեփյանը՝ հետագայում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ 1-ին

[18] «Սովետական Վրաստան», «Մարտակոչ», «Պրոլետար», «Խորհրդային Վրաստան»:

[19] Տե՛ս **Մելիքյան Լ.**, Հայկական թեմը և հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դարերում, էջ 15; **նույնի՝** Վիրահայոց թեմի նախապատմությունից, «Պատմություն և մշակույթ»: Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2017, էջ 144-148:

կայսեր ստորագրած հայ եկեղեցու կանոնադրության («Պոլոժենիե») համաձայն ստեղծված վեց թեմերից մեկը Վիրահայոց թեմն էր: Թեմն ընդգրկում էր հետևյալ շրջանները. Թիֆլիս քաղաքն իր շրջակայքով, Սղնախը, Թելավը, Ախալցխան, Գորին, Դուշեթը, Իմերեթը, Բորչալուն, Սանահինը, Ղազախը, Շամշադինը և Գանձակը: Ընդհանուր առմամբ թեմն ուներ 10 վանք, 240 եկեղեցի և 28 մատուռ[20]: 1903 թ. դրությամբ, ներառյալ Արդվին-Արտանուշ շրջանը, եկեղեցիների թիվը հասել է 256-ի[21]:

Բ. **«Վիրահայոց թեմը Գևորգ արքեպս. Չորեքչյանի առաջնորդության առաջին շրջանում (1921-1927 թթ.)»** ենթագլխում ներկայացված է թեմի առաջնորդի գործունեությունը չափազանց բարդ ու դժվարին պայմաններում, երբ Վրաստանում սկսվել էր մեծ պայքար կրոնի, եկեղեցու և հոգևորականության դեմ: Թեմում փակվում էին բազմաթիվ եկեղեցիներ, տեղական իշխանություններին էին հանձնվում դրանց ամբողջ գույքը, իսկ հոգևորականությանը հրավիրում էին կոմիսարիատներ և պահանջում թողնել իրենց սպասավորությունը՝ սպառնալով զրկել սեփականությունից: Բացի այդ՝ իշխանությունների հովանավորչության ներքո սկիզբ էր առել «Ազատ եկեղեցական եղբայրություն» անունը կրող եկեղեցին պառակտող շարժումը: Թեմի առաջնորդ Գևորգ եպս. Չորեքչյանը այդ ծանր ու պատասխանատու ժամանակաշրջանում չի խնայել ոչ մի ջանք իր ժողովրդին ու եկեղեցուն աջակցելու, մասնավորապես՝ թեմը հակաեկեղեցական քաղաքականության դիրքորոշումից հեռու և անաղարտ պահելու համար: Ընդսմին, բազմաթիվ գրություններով ու խնդրագրերով՝ ուղղված Վրաստանի պատկան մարմիններին, Գևորգ եպս. Չորեքչյանը կարողացել է լուծել բազմաթիվ խնդիրներ, որոնք ծառացել էին թեմում:

Գ. **«Արտակ եպս. Սմբատյանցի թեմակալության տարիները (1929-1933 թթ.): Վիրահայոց թեմը ստալինյան բռնատիրության շրջանում (1930-ական թթ.)»** ենթագլխում ներկայացված է թեմի առաջնորդի գործունեությունը մի այնպիսի բարդ ժամանակաշրջանում, երբ մեծ գործունեություն էր ծավալել «Ազատ եկեղեցականներ» շարժումը: Վերջիններիս դեմ առաջնորդը թեմական խորհրդի հետ միասին ակտիվ աշխատանք է տարել: Շատ դժվար ժամանակներ էին Վիրահայոց թեմի համար: Եկեղեցիների հարկադրմանն ավելացել էր ևս մեկ կարևոր խնդիր. Թիֆլիսի մի քանի եկեղեցիներ՝ Չուղուրեթի Ս. Ասվածածին, Հավլաբարի Ս. Լուսավորիչ և Վերայի Ս. Խաչ եկեղեցիներն անհայտ չարագործների կողմից ենթարկվել էին թալանի ու կողոպուտի, քանի որ բացակայում էր գիշերային կանոնավոր հսկողությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Թեմական խորհուրդը 1933 թ. հոկտեմբերին որոշում է ընդունում հանձնարարել եկեղեցական-ծխական խորհուրդներին՝ երկաթյա փականքներով փակել եկեղեցիների դռներն ու լուսամուտները: Բացի այդ՝ որոշվում է նաև եկեղեցապատկան թանկարժեք զարդերն ու անոթները տեղափոխել ավելի ապահով վայր[22]: 1933 թ. դեկտեմբերի վերջին փակվել են Թիֆլիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Մողնու Ս. Գևորգ և

---

[20] Տե՛ս **Երիցեանց Աղ.**, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում: Մասն Բ (1831-1842 թթ.), Թիֆլիզ, 1895, էջ 256-257:

[21] Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 986:

[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 148, ց.1, գ. 29, թ. 4-5:

Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցիները։ Այս մասին 1934 թ. հունվարի 2-ին հեռագրով Մայր Աթոռին տեղեկացրել է Վրաստանի Հայոց թեմական խորհուրդը[23]։

Սույն ենթագլուխում ներկայացնում է նաև ստալինյան բռնաճնշումների քաղաքականությունը, որը վարում էր բոլշևիկյան կուսակցությունն իր գաղափարախոսության ու ծրագրային հիմնադրույթներին համապատասխան։ Վիրահայոց թեմի բազմաթիվ հոգևորականներ այդ ժամանակաշրջանում բռնադատվել են, և մի մասն էլ աքսորվել Հեռավոր Արևելք, Սիբիր ու դաժան ճակատագիր ունեցել։ Եվ միայն Ստալինի մահից հետո երկրի քաղաքական ղեկավարությունը դատապարտեց անհատի պաշտամունքը և հնարավորություն ընձեռնեց բռնադատվածներին ու նրանց ազգականներին դիմելու համապատասխան մարմիններին՝ վերանալելու այդ տարիների գործերը։

Երկրորդ գլուխը՝ «Վիրահայոց թեմի գործունեությունը 1941-1972 թթ.», բաղկացած է երկու ենթագլխից։

Ա. **«Վիրահայոց թեմը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)»** ենթագլխում ներկայացված է թեմի գործունեությունը պատերազմի ծանր տարիներին։ 1941 թ. հուլիսի 5-ին և 30-ին հայ եկեղեցու Գերագույն հոգևոր խորհուրդը կոչով դիմում է հայ ժողովրդին՝ պաշտպան կանգնել հայրենիքին և օգել դիմակայելու թշնամուն։ Հայրենական մեծ պատերազմում զգալի օգնություն է ցուցաբերել նաև Վիրահայոց թեմը։ Խորհրդային Վրաստանից հազարավոր հայորդիներ, որոնց թվում բազմաթիվ հոգևորականներ, հերոսաբար մարտնչել են թշնամու դեմ։ Թիֆլիսի մի քանի հայկական եկեղեցիներում կայացել են ոգեշնչման միջոցառումներ, և որոշ եկեղեցիներ էլ ծառայել են որպես սննդամթերքի պահեստներ։ Հայրենիքի պաշտպանության գաղափարն ստիպեց երկրի ղեկավար Ի. Ստալինին մերձեցման եզրեր փնտրել հոգևոր առաջնորդների, եկեղեցու հետ։ Երկրի ներքաղաքական կյանքում դադարեցվեցին հակաեկեղեցական գործունեությունը, որպեսզի կարողանան ժողովրդին համախմբել միասնական պայքարին։ 1945 թ. ապրիլի 19-ին՝ կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպս. Չորեքչյանը հանդիպելով Ստալինին, մի շարք խնդրագրեր է ներկայացնում, որը և բավարարվում է։

Բ. **«Վիրահայոց թեմը (1945-1972 թթ.)»** ենթագլխում ներկայացված են հետպատերազմյան տարիները, երբ թեմի առաջնորդների կողմից բազմաթիվ խնդրագրեր են ուղղվում պատկան մարմիններին եկեղեցիների վերաբացման առթիվ։ Խորհրդային Վրաստանում բնակվող շուրջ 400 հազար հայ բնակչությունն սկսում է վերազարթոնք ապրել։ Այդ տարիներին Վիրահայոց թեմում վերաբացվել են մի շարք հայկական եկեղեցիներ, վերանորոգվել է Թբիլիսիի Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին։

Երրորդ գլուխը՝ «Վիրահայոց թեմը խորհրդային վերջին երկու տասնամյակներում (1972-1991 թթ.», բաղկացած է երկու ենթագլխից։

[23] Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 4։

Ա. **«Գևորգ եպս. Սերայդարյանի առաջնորդական շրջանը (1972-1991 թթ.)»** ենթագլխում ներկայացված է թեմի առաջնորդի գործունեությունը: Նա 1984 թ. Վեհափառ հայրապետին ներկայացրել է Վիրահայոց թեմի ուսումնական, մշակութային և եկեղեցական կյանքի համառոտ նկարագիրը, ըստ որի՝ Վրաստանի Հանրապետությունում գործել են 200-ից ավել հայկական դպրոցներ, Թբիլիսիի պետական համալսարանում գործել է հայագիտական ամբիոն: Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը հրատարակում է «Կամուրջ» անունով տարեգիրք: Հրատարակվում է «Սովետական Վրաստան» թերթը: Տրվում են նաև մեկ ժամ տևողությամբ ամենօրյա հայերեն ռադիոհաղորդումներ... Վրաստանի հայկական գործող եկեղեցիներն ապահովվում են քահանաներով, դպրաց երգեցիկ խմբերով և այլն[24]:

Բ. ենթագլխում՝ **«Եկեղեցիների վերաբացում և վերանորոգություններ (1974-1991 թթ.)»**, ներկայացվում են Գևորգ եպս. Սերայդարյանի առաջնորդության տարիներին արված բազմաթիվ եկեղեցիների վերանորոգության աշխատանքները:

1977-1978 թթ. ներքուստ վերանորոգվել է Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցին, որի ընթացքում եկեղեցու որմերի վեց շերտ յուղաներկերի տակից հայտնաբերվել են 16 մեծադիր սրբանկարներ, որոնք պատկանում են Հովնաթան Հովնաթանյանի և նրա շնորհալի աշակերտ Մկրտում Հովնաթանյանի վրձիններին: Սրբանկարները վերանորոգվել և ստացել են իրենց նախկին տեսքը: 1980 թ. Թբիլիսիի Հայոց առաջնորդարանն ընդարձակվել և հիմնովին վերանորոգվել է: Վերանորոգվել են նաև Թբիլիսիի Ս. Էջմիածնեցոց, Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ախալքալաքի Ս. Խաչ, Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցիները: Այդ աշխատանքները կատարվել են ծխականների նյութական նվիրատվություններով:

Եզրակացություններ: Վիրահայոց թեմի 1921-1991 թթ. Պատմության ուսումնասիրությունից հետևում է.

Վիրահայոց թեմը Հայաստանի Հանրապետությունից դուրս ամենահին թեմն է, որը գոյություն ունի տակավին XII դ. 70-ական թվականներից: Թեմն ընդգրկում է Թբիլիսիի, Ջավախքի, Աջարիայի, Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում գտնվող համայնքները: Այն համախմբում և գլխավորում է Վրաստանի տարածքում գործող եկեղեցիները, առաջնորդում հայ քրիստոնյա համայնքը, գլխավորում է Վրաստանի հայ բնակչության հոգևոր կյանքը, նպաստում տեղի հայ համայնքի կենտրոնացմանը՝ Հայ առաքելական սուրբ եկեղեցու շուրջը:

Խորհրդային առաջին տարիներին Վիրահայոց թեմը հայտնվել էր բարդ իրավիճակում: Բոլշևիկների հակաեկեղեցական քաղաքականության հետևանքով դժվարություններ էին հարուցվում նաև Վիրահայոց թեմի արդյունավետ գործունեության համար: Թեմի առաջնորդներից և թեմական խորհրդից մեծ ջանքեր էին պահանջվում կարգավորելու եկեղեցական խնդիրները: Այդ դժվարին շրջանը համընկավ թեմական առաջնորդներ Գևորգ արք. Չորեքչյանի (1921-1927, 1936-1938 թթ.) և Արտակ եպս. Սմբատյանցի (1929-1933 թթ.) կառավարման տարիների հետ: Նրանք, մշտական կապի մեջ լինելով Վեհափառ հայրապետի հետ, վերջինիս տեղեկացնում էին Վրաստանում

[24] «Էջմիածին», 1984, ԺԱ-ԺԲ, էջ 8:

պետական մարմինների կողմից ծավալված դաժան պայքարը կրոնի և հոգևորականության դեմ, միաժամանակ ջանք ու եռանդ չէին խնայում թեմի իրավունքները պաշտպանելու համար՝ բազմաթիվ գրություններ ու խնդրագրեր հղելով պատկան մարմիններին, բանակցելով շատ պետական այրերի հետ:

Թեմի խնդիրները շարունակվեցին նաև ստալինյան բռնապետության տարիներին՝ 1930-ական թվականներին: Հակակրոնական քաղաքականության հետևանքով քանդվել են բազմաթիվ եկեղեցիներ, դադարեցվել է շատերի գործունեությունը: Եկեղեցիների մի մասն էլ, գոյատևելով մինչև Վրաստանի անկախացումը, վերափոխվել են Վրաց ուղղափառ եկեղեցիների: Շատ հոգևորականներ ենթարկվել են հալածանքների և աքսորի: Այդուհանդերձ այդ ծանր տարիներին թեմի առաջնորդները, ցուցաբերելով կամք ու վճռականություն, շարունակել են պայքարել թեմի իրավունքների համար:

Հայրենական մեծ պատերազմի շրջանում Վիրահայոց թեմի բազմաթիվ հայ հավատացյալների հետ միասին պատերազմի դաշտ են մեկնում նաև եկեղեցու սպասավորները: Շատ հոգևորականներ աչքի են ընկնում իրենց քաջությամբ ու անձնվիրությամբ, իսկ մի քանի եկեղեցիներ դառնում են ռազմական պահեստներ: Պատերազմում հայ հոգևորականության մասնակցությունը և հերոսական պայքարը նպաստեց պետություն-եկեղեցի հարաբերությունների մեղմացմանը: Հատկապես մեծ նշանակություն ունեցավ 1945 թ. ապրիլի 19-ի Ի. Ստալինի հանդիպումը կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Չորեքչյանի հետ: Վերջինիս կողմից բարձրացված հարցերի մեծ մասը Ստալինի կողմից բավարարվեց: Այն դրական ազդեցություն ունեցավ նաև Վիրահայոց թեմի գործունեության վրա: Թեմի առաջնորդ Սահակ ավագ քահ. Սահակյանի օրոք (1944-1948 թթ.) վերաբացվում են մի քանի հայկական եկեղեցիներ, իսկ որոշները նաև վերանորոգվում են: Աստիճանաբար սկսում է աշխուժանալ թեմական կյանքը: Այսուհանդերձ, պետության կողմից բոլոր հնարավոր միջոցներով վերահսկվում էր եկեղեցին:

1948 թ. Վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ է նշանակվում Կարապետ արքեպս. Թումանյանը (1948-1950 թթ.), որը ջանք ու եռանդ չէր խնայում թեմի գործերը կարգավորելու և էլ ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Վիրահայոց թեմում եկեղեցիների վերանորոգության մեծ աշխատանքներ են կատարել նաև թեմի առաջնորդներ Տ. Կոմիտաս արք. Տեր-Ստեփանյանը (1957 - 1972 թթ.) և Գևորգ եպս. Սերայդարյանը (1972–2002 թթ.): Նրանց աշխույժ գործունեության շնորհիվ մեծ վստահություն էր ձեռք բերվել Վրաց պատրիարք-կաթողիկոսների և վրացական իշխանությունների շրջանում, ինչը նպաստել է Վիրահայոց թեմում կրոնական և մշակութային կյանքի առաջընթացին, եկեղեցիների վերանորոգմանը, վերաբացմանն ու վերաօծմանը: Թեմի գործունեությունը արդյունավետ դարձնելու նպատակով հիմնվել են կրթության, մշակույթի, երիտասարդության հարցերի, մամլո և լրատվության, իրավական և համագործակցության, ֆինանսական, վարչատնտեսական և սոցիալական բաժիններ, ներդրվել է կառավարման ճկուն համակարգ: Թեմը համալրվել է քահանաներով և սարկավագներով, աճել է աշխատակիցների թվաքանակը և այլն:

Վիրահայոց թեմի առանձնահատկությունն այն է, որ այն Հայաստանի Հանրապետությունից դուրս գործող ամենահին թեմն է: Վրաստանը՝ որպես քրիստոնյա երկիր, դարեր շարունակ հարազատ հայրենիք է նաև հայերի համար: Մյուս

առանձնահատկությունն այն է, որ, Վրաց եկեղեցու հետ դարեր շարունակ կողք կողքի գոյատևելով, Վիրահայոց թեմը յուրահատուկ կամուրջ էր Ս. Էջմիածնի և Վրաց պատրիարքարանի միջև:

Ամփոփելով նշենք, որ Վիրահայոց թեմն իր սկզբնավորման ժամանակներից սկսած Վրաստանում ապրող հայ բնակչության համար հանդիսանում է այն վառ օջախը, որի ազգապահպան գործունեության շնորհիվ դարեր ի վեր հարատևում են ազգային քրիստոնեական ծեսերն ու մշակույթը:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. **Ասատրյան Ա.,** Թիֆլիսի հայկական եկեղեցիները. Շամքորեցոց Սուրբ Աստվածածին և Սուրբ Մինաս եկեղեցիները (Պատմություն և տարեգրություն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2018 (780 էջ + 32 էջ ներդիր), խմբագիր՝ **Գեորգ Տեր-Վարդանեան**:
2. **Ասատրյան Ա.,** Թբիլիսիի Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցին (վավերագրություն, Ա մաս), «Հուշարձան» տարեգիրք, Երևան, 2013, Ը, էջ 87-96,
3. **Ասատրյան Ա.,** Թբիլիսիի Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցին (վավերագրություն, Բ մաս), «Հուշարձան» տարեգիրք, 2014, Թ, էջ 139-154:
4. **Ասատրյան Ա.,** Հին Թիֆլիսի Հայոց Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցին, «Բազմավէպ», Վենետիկ, 2016, № 3-4, էջ 105-127:
5. **Ասատրյան Ա.,** Ախալցխայի Հայոց Սուրբ Վարդանանց եկեղեցին, «Էջմիածին», 2018, Ա, էջ 136-147:
6. **Ասատրյան Ա.,** Հին Թիֆլիսի Թանդոյան Սուրբ Աստվածածին եկեղեցին, «Էջմիածին», 2018, Զ, էջ 49-63:
7. **Ասատրյան Ա.,** Նորաշենի Սուրբ Աստվածածին եկեղեցին (վավերագրություն), «Հուշարձան» տարեգիրք, Երևան, 2018, ԺԲ-ԺԳ, էջ 216-230:
8. **Ասատրյան Ա.,** Թիֆլիսի Հայոց Քարափի Սուրբ Գեորգ եկեղեցին, «Հուշարձան» տարեգիրք, Երևան, 2020, ԺԱ, էջ 30-40:
9. **Ասատրյան Ա.,** Գևորգ արք. Չորեքչյանի Վիրահայոց թեմի առաջնորդական առաջին շրջանը (1921-1927 թթ.), «Հայագիտական հանդես», Երևան, 2025, № 3 (39), էջ 88-96:

АСАТРЯН АРМЕН ОКТЕМБЕРОВИЧ

ЕПАРХИЯ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ПРОВОСЛАВНОЙ ЦЕРКВИ В ГРУЗИИ В СОВЕТСКИЕ ГОДЫ (1921–1991 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита диссертации состоится 20-го февраля 2026 г. в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (адрес: 0019, Республика Армении, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Грузинская епархия является неотъемлемой частью Армянской Апостольской Святой Церкви. Управление Грузинской епархией Армянской Апостольской Церкви осуществляется по канонам Армянской Церкви под руководством католикоса всех армян. Глава епархии назначается Его Святейшеством Католикосом всех армян.

Грузинская епархия одна из старейших епархий Армянской Апостольской Церкви, существующая с 70-х годов XII века. В состав епархии входят общины, расположенные в регионах Тбилиси, Джавахк, Аджария и Квемо-Картли. Она объединяет и возглавляет действующие в Грузии армянские церкви, координирует деятельность армянской христианской общины, руководит духовной жизнью армянского населения Грузии, содействует централизации местной армянской общины вокруг Армянской Апостольской Святой Церкви. Епархия организует и проводит образовательные, культурные и молодежные мероприятия, направленные на сохранение армянской идентичности и национального самосознания.

В первые годы советской власти Грузинская епархия Армянской Апостольской Церкви оказалась в сложном положении. В результате антицерковной политики пришедших к власти большевиков для Грузинской епархии Армянской Апостольской Церкви возникли многочисленные проблемы, усложнающие продолжение эффективной деятельности епархии. От руководства епархии и епархиального совета потребовались огромные усилия по урегулированию этих проблем. Данный сложный период совпал с годами правления епархиальных руководителей архиепископа Геворга Чорекчяна (1921–1927, 1936–1938) и епископа Артака Смбатянца (1929–1933). Они не жалели сил и энергии для защиты прав епархии, направляя многочисленные письма и ходатайства в соответствующие органы.

Диссертация имеет не только научное, но и практическое значение. История епархии, тесно переплетенная с историей армянского народа, представляет собой огромное духовное и культурное наследие, созданное на протяжении веков. Основная цель темы – детально изучить и представить деятельность Грузинской епархии Армянской Апостольской Церкви в советский период. Научная новизна заключается в том, что впервые

всесторонне представляется история Грузинской епархии Армянской Апостольской Церкви с 1921 по 1991 годы, с учетом фактов, путем введения в оборот ряда первоисточников и вновь выявленных архивных документов.

Основным источником или базой диссертации являются архивные документы консистории Грузинско-Имеретинской епархии, Просвещенного Синода Святого Эчмиадзина, Дивана Католикосата, а также другие церковные фонды, хранящиеся в Национальном архиве Армении, изучение которых позволило в полной мере представить деятельность епархии.

Диссертация состоит из введения, трех глав, восьми подглав, заключения, приложений, списка использованной литературы и источников. Во введении представлены актуальность темы, научная новизна, прикладное значение, цели и задачи, методологическая основа, степень исследованности, использованная литература и источники.

Период деятельности Архиепископа Геворга Чорекчяна представлена в крайне сложных и напряжённых условиях, когда советская власть вела ожесточённую борьбу с религией, церковью и духовенством. Многие церкви в епархии были закрыты, всё их имущество передано местным властям, а священнослужителей вызывали в комиссариаты и требовали оставить служение, угрожая лишением имущества. Архиепископ Геворг Чорекчян в этот сложный и ответственный период не жалел сил для поддержки своего народа и церкви, сумев решить многочисленные проблемы, возникшие в епархии.

В 1930-х годах, в результате антирелигиозной политики, ряд армянских церквей были разрушены и прекратили своё существование. Некоторые, сохранившиеся до обретения Грузией независимости, были переведены под управление Грузинской Православной Церкви.

В Грузинской епархии Армянской Апостольской Церкви большую работу по восстановлению церквей провёл её руководитель, архиепископ Комитас Тер-Степанян (1957–1972) и епископ Геворг Серайдарян (1972–2002), в результате активной деятельности которых было завоевано большое доверие у Патриарха-католикоса Грузии и властей Грузии, что способствовало развитию религиозной и культурной жизни епархии, а также восстановлению и переосвящению армянских церквей.

Были установлены деловые и дружеские отношения с Патриархией Грузинской Православной Церкви, а также с правительством Грузии, действующими религиозными и национальными общинами. Регулярно велись переговоры по вопросам сохранения армянских историко-культурных памятников и их возвращения под управление Грузинской епархии Армянской Апостольской Церкви.

Диссертация имеет приложения, в которых, помимо документов, приведены списки руководителей Грузинской епархии Армянской Апостольской Церкви в советский период и действующих церквей епархии.

ASATRYAN ARMEN HOKTEMBER

THE DIOCESE OF THE ARMENIAN APOSTOLIC ORTHODOX HOLY CHURCH IN GEORGIA DURING THE SOVIET PERIOD (1921–1991)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The Defense of the Dissertation will be held on February 20, 2026, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

RESUME

The diocese of the Armenian Apostolic Church in Georgia is the integral part of Armenian Apostolic Church. The administration of the Georgian diocese is carried out according to the canons of the Armenian Church under the leadership of the Catholicos of all Armenians. The head of the diocese is appointed by His Holiness the Catholicos of All Armenians.

The Georgian Diocese is one of the oldest dioceses of the Armenian Apostolic Church, dating back to the 1170s. It includes communities in the regions of Tbilisi, Javakhk, Ajaria, and Kvemo Kartli. The diocese unites and oversees the churches operating in Georgia, leads the Armenian Christian community, guides the spiritual life of the Armenian population, and fosters the centralization of the local Armenian community around the Armenian Apostolic Holy Church. It also organizes and conducts educational, cultural, and youth events aimed at preserving Armenian identity and national consciousness.

In the early Soviet years, the Armenian diocese of Georgia found itself in a difficult situation. The anti-church policy of the Bolsheviks also created difficulties for the effective functioning of the Armenian diocese of Georgia. Great efforts were required from the leaders of the diocese and the diocesan council to resolve church issues and problems. That difficult period coincided with the years of rule of the diocesan leaders: archbishop Gevorg Chorekchyan (1921-1927, 1936-1938) and bishop Artak Smbatyants (1929-1933). They spared no effort and energy to protect the rights of the diocese: they sent numerous letters and petitions to the relevant bodies and negotiated with many statesmen.

The dissertation has not only scientific but also practical significance. The history of the diocese, closely intertwined with the history of the Armenian people, represents a vast spiritual and cultural heritage developed over the centuries. The main objective of the study is to examine in detail and present the activities of the Georgian Diocese of the Armenian Apostolic Church during the Soviet period. The scientific novelty of the work lies in the fact that, for the first time, the history of the Georgian Diocese from 1921 to 1991 is presented comprehensively, taking into account historical facts and introducing a number of primary sources and newly identified archival documents.

The main sources for the dissertation are the archival documents of the Consistory of the Georgian-Imeretian Diocese, the Enlightened Synod of Holy Etchmiadzin, the Divan of the Catholicosate, as well as other church collections preserved in the National Archives of Armenia. The study of these materials made it possible to present the activities of the diocese comprehensively.

The dissertation consists of an introduction, three chapters, eight subchapters, a conclusion, appendices, a list of references and sources. The introduction presents the relevance of the topic, scientific novelty, applied significance, goals and objectives, methodological basis, degree of research, literature and sources used.

The period of activity of Archbishop Gevorg Chorekchyan is presented in extremely difficult and tense conditions, when the Soviet government waged a fierce struggle against religion, the church and the clergy. Many churches in the diocese were closed, all their property was transferred to local authorities, and clergy were summoned to the commissariats and demanded to leave ministry, threatening to be deprived of their property. During this difficult and responsible period, Archbishop Gevorg Chorekchyan spared no effort to support his people and the church, managing to solve numerous problems that arose in the diocese.

In the 1930s, as a result of anti-religious policies, a number of Armenian churches were destroyed and ceased to exist. Some that survived until Georgia gained independence were transferred to the administration of the Georgian Orthodox Church.

In the Georgian Diocese of the Armenian Apostolic Church, significant work on the restoration of churches was carried out by its leaders, Archbishop Komitas Ter-Stepanyan (1957–1972) and Bishop Gevorg Seraidaryan (1972–2002). As a result of their efforts, they earned the trust of the Patriarch-Catholicos of Georgia and the Georgian authorities, which contributed to the development of the diocese's religious and cultural life, as well as to the restoration and rededication of Armenian churches.

Business and friendly relations were established with the Patriarchate of the Georgian Orthodox Church, the government of Georgia, and existing religious and national communities. Regular negotiations were held on issues related to the preservation of Armenian historical and cultural monuments and their return to the jurisdiction of the Georgian Diocese of the Armenian Apostolic Church.

The dissertation has appendices, which, in addition to documents, contain lists of the leaders of the Georgian diocese of the Armenian Apostolic Church in the Soviet period and the existing churches of the diocese.